Հայտարարություն
«Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում իրականացվող «Հայաստանի բարձրագույն կրթության նորարարությունների մրցակցային հիմնադրամի» միջոցներից իրականացվող «Նախադպրոցական և տարրական կրթության արդիականացում ժամանակի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման միջոցով» ծրագրի շրջանակներում
ուսումնաօժանդակ նյութերի մանկավարժական և գիտամեթոդական նախագծման՝ ըստ պետական կրթական չափորոշչի և ծրագրի, փորձարկման, վերանայման և կայքում զետեղման (տարրական դասարանների՝ I-IV դասարանների երեխաների համար մաթեմատիկայի ուսումնառության համար ուսումնաօժանդակ նյութերի նախագծում և փորձարկում) նպատակով խորհրդատուի ընտրության մրցույթի

<< 04 >> դեկտեմբեր 2017թ.

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը, այսուհետ՝ ՀՊՄՀ, «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում իրականացվող «Հայաստանի բարձրագույն կրթության նորարարությունների մրցակցային հիմնադրամի» միջոցներից իրականացնում է «Նախադպրոցական և տարրական կրթության արդիականացում ժամանակի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման միջոցով» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր), որի նպատակը ՀՊՄՀ-ում ժամանակակից կրթական մարտահրավերներին համապատասխան նորարարական գործնական ու հետազոտական հմտություններով և կարողություններով հարուստ մասնագետների պատրաստումն է նախադպրոցական և տարրական կրթության ոլորտում:

Ծրագրի շրջանակներում ստեղծվելու են ուսումնաօժանդակ նյութեր նախադպրոցական տարիքի և տարրական դասարանների աշակերտների համար: Մասնավորապես նախատեսվում է տարրական դասարանների՝ I-IV դասարանների երեխաների համար մաթեմատիկայի ուսումնառության համար ուսումնաօժանդակ նյութերի նախագծում և փորձարկում:

Խորհրդատուն աշխատանքները կիրականացնի երեք փուլով՝ 1-ին փուլ՝ 1,5 ամիս, 2-րդ փուլ՝ 1,5 ամիս, երրորդ փուլ՝ 2 ամիս:

Անհատ խորհրդատուի կողմից իրականացվելիք գործողությունների շրջանակը հետևյալն է.

Ծառայությունների մատուցումը նախատեսվում է իրականացնել 1 անհատ խորհրդատուի ներգրավմամբ, ով հաշվետու ժամանակահատվածում կիրականացնի ներքոնշյալ աշխատանքները:

Անհատ խորհրդատուի կողմից իրականացվելիք գործողությունների շրջանակը հետևյալն է.

<u>Ուսումնաօժանդակ նյութերի մանկավարժական և գիտամեթոդական նախագծում</u>

- Սահմանել և տիպավորել տարրական դասարանների՝ I-IV դասարանների երեխաների համար մաթեմատիկայի ուսումնառության համար ուսումնաօժանդակ նյութերի մշակման համար նախատեսված գործիքակազմը
- Մշակել տարրական դասարանների՝ I-IV դասարանների երեխաների համար մաթեմատիկայի ուսումնառության համար նախատեսված առաջադրանքներ և վարժություններ՝ ըստ պետական կրթական չափորոշչի

Փորձարկում

- Քննարկել մշակված առաջադրանքներն ու վարժությունները Սկզբնական կրթության ֆակուլտետի համապատասխան ամբիոնի դասախոսների հետ
- Քննարկել մշակված առաջադրանքներն ու վարժությունները ՀՊՄՀ ինֆորմատիկայի ամբիոնի համապատասխան մասնագետների հետ

Վերանայում

- Վերանայել և լրամշակել առաջադրանքներն ու վարժություններն ըստ ներկայացված դիտարկումների

Թվայնացում և զետեղում հարթակում

- Աշխատել ՀՊՄՀ-ի հետ համագործակցող համակարգչային հարմարեցված ծրագիր և ուսումնաօժանդակ նյութերի պլատֆորմը մշակող կազմակերպության հետ՝ նյութերը թվայնացնելու ուղղությամբ:
- Կազմակերպել նյութերի թվայնացումը և զետեղումը վիրտուալ պլատֆորմում ՀՊՄՀ մուլտիմեդիոն լաբորատորիայի հետազոտողների մասնակցությամբ:
- Փորձարկել նյութերը համապատասխան տարիքային խմբում և վերանայել՝ ըստ անհրաժեշտության:

Ակնկալվող արդյունքները

Խորհրդատուն առաջին փուլի աշխատանքների ավարտից հետո 5-օրյա ժամկետում ներկայացնում է հաշվետվություն ներառյալ.

i. Տարրական դասարանների՝ I-IV դասարանների երեխաների համար մաթեմատիկայի ուսումնառության համար ուսումնաօժանդակ նյութերի մշակման համար նախատեսված գործիքակազմի նախնական տարբերակը

Խորհրդատուն երկրորդ փուլի աշխատանքների ավարտից հետո 5-օրյա ժամկետում ներկայացնում է հաշվետվություն ներառյալ.

ii. Տարրական դասարանների՝ I-IV դասարանների երեխաների համար մաթեմատիկայի ուսումնառության համար վերանայված և ամփոփ առաջադրանքները և վարժությունները՝ ըստ պետական կրթական չափորոշչի (ընդհանուր՝ 40-45 վարժություն):

iii. տարրական դասարանների՝ I-IV դասարանների երեխաների համար մաթեմատիկայի ուսումնառության համար ուսումնաօժանդակ նյութերի մշակման համար նախատեսված գործիքակազմի վերանայված և ամփոփ տարբերակը

Աշխատանքի երրորդ փուլի ավարտից 5 օրյա ժամկետում հաշվետվություն իրականացված աշխատանքների վերաբերյալ, ներառյալ՝

iv. Համապատասխան տարիքային խմբի համար նախատեսված թվայնացված ուսումնաօժանդակ նյութերը՝ զետեղված վիրտուալ պլատֆորմում:

Խորհրդատուի աշխատանքները համակարգում է ՆՄՀ «Նախադպրոցական և տարրական կրթության արդիականացում ժամանակի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման միջոցով» ծրագրի համակարգողը, իսկ հաշվետվությունները հաստատում՝ նույն Ծրագրի ղեկավարը:

Նվազագույն որակավորման պահանջներն են.

Նշված ծառայության իրականացման համար պահանջվում են անհատ խորհրդատուին ներկայացվող հետևյալ նվազագույն որակավորման պահանջներն ու գնահատման չափանիշները.

- Բարձրագույն կրթություն մանկավարժության, կրթության կառավարման, և/կամ կրթության ոլորտում տեխնոլոգիաների ներդրման կամ այլ համապատասխան մասնագիտական ոլորտներում
- Առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ բարձրագույն կրթության ոլորտում, մասնավորապես տարրական դասարանների մանկավարժության ուղղությամբ
- Կրթական ծրագրերի, կրթական ծրագրերի բաղադրիչների, գնահատման ձևերի, ըստ ծրագրի վարժանքների և առաջադրանքների մշակման փորձը պատրաստիր է
- Տարրական դպրոցի կրթական ծրագրերի և պետական կրթական չափորոշիչների իմացություն
- Համագործակցության փորձը միջնակարգ կրթական հաստատությունների հետ ցանկալի է
- Օտար լեզվի (անգլերեն կամ ռուսերեն) իմացությունը պարտադիր է
- Համակարգչով աշխատելու հմտություններ (Microsoft փաթեթ, ինտերնետում որոնում իրականացնելու, փաստաթղթային մի ֆորմատից մյուսը (word to pdf, pdf to jpg, և այլն) կոնվերտացիա անելու կարողություններ)

Գնահատման չափանիշներ

Խորհրդատուի ընտրությունը իրականացվելու է Ընտրության հանձնաժողովի կողմից ըստ հետևյալ գնահատման չափանիշների.

Չափանիշը	**Առավելագույն միավորը**
Որակավորում՝ - Բարձրագույն կրթություն մանկավարժության կրթության կառավարման, և/կամ կրթության	30

ոլորտում տեխնոլոգիաների ներդրման կամ այլ համապատասխան մասնագիտական ոլորտներում - Օտար լեզվի (անգլերեն կամ ռուսերեն) իմացությունը պարտադիր է	
Ընդհանուր փորձառություն և հմտություններ՝ - Առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ բարձրագույն կրթության ոլորտում, մասնավորապես տարրական դասարանների մանկավարժության ուղղությամբ - Կրթական ծրագրերի, կրթական ծրագրերի բաղադրիչների, գնահատման ձևերի, ըստ ծրագրի վարժանքների և առաջադրանքների մշակման փորձը պատրադիր է - Համակարգչով աշխատելու հմտություններ (Microsoft փաթեթ, ինտերնետում որոնում իրականացնելու, փաստաթղթային մի ֆորմատից մյուսը (word to pdf, pdf to jpg, և այլն) կոնվերտացիա անելու կարողություններ)	30
Հատուկ փորձառություն՝ - Տարրական դպրոցի կրթական ծրագրերի և պետական կրթական չափորոշիչների իմացություն - Համագործակցության փորձը միջնակարգ կրթական հաստատությունների հետ ցանկալի է	40

Դիմող թեկնածուները դիմումին կից (դիմումի ձևը կցվում է) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- ինքնակենսագրական տվյալները (CV), որը պետք է պարունակի դիմողի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝ անունը, ազգանունը, ծննդյան թիվը, կրթությունը, մասնագիտությունը, մանրամասն աշխատանքային փորձը, աշխատանքների ցանկը:
- Կրթությունը հիմնավորող փաստաթղթեր:

Ամբողջ ծրագիրը պետք է իրականացնել 5 ամսվա ընթացքում՝ երեք փուլով:

Համապատասխան փորձ ունեցող մասնագետները կարող են դիմել աշխատանքային օրերին Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ հիմնադրամ՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 17, 214 սենյակ հասցեով, կամ էլ. փոստով (davidmeliqsetyan@mail.ru) մինչև ս.թ. դեկտեմբերի 15 -ին, ժամը 17:00-ին:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել վերոհիշյալ հասցեով կամ 010-597082 հեռախոսահամարով:

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ հիմնադրամ
Տիգրան Մեծի 17, 214 սենյակ

Դիմող՝ *(անուն ազգանուն)*
հասցե՝(…… ……..)
հեռախոս՝ (…….)
Էլ. փոստ՝ (……..)

Դիմում

Սույնով ցանկություն եմ հայտնում մասնակցել «Նախադպրոցական և տարրական կրթության արդիականացում ժամանակի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման միջոցով» ծրագրի շրջանակներում ուսումնաօժանդակ նյութերի մանկավարժական և գիտամեթոդական նախագծման՝ ըստ պետական կրթական չափորոշչի և ծրագրի, փորձարկման, վերանայման և կայքում զետեղման նպատակով խորհրդատուի ընտրության մրցույթին (տարրական դասարանների՝ I-IV դասարանների երեխաների համար մաթեմատիկայի ուսումնառության համար) մրցույթին:
Կից ներկայացնում եմ տվյալներ իմ աշխատանքային փորձի և կրթության մասին:

Դիմող՝ *(անուն, ազգանուն)*

<<…>> ……..... 2017թ.